ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » մայիսի 2019 թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի՝ Ձեզ ենք ներկայացնում «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-080-01.04.2019-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-080-01.04.2019-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է ձեռնպահ մնալ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումից՝ հաշվի առնելով նախագծով ներկայացված իրավակարգավորումների ու դրանց հիմնավորման վերաբերյալ ստորև բերված դիտարկումները՝

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 88-րդ հոդվածի համաձայն՝ «1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը ժողովրդի ներկայացուցչական մարմինն է:

2. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովն իրականացնում է օրենսդիր իշխանությունը:

3. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը վերահսկողություն է իրականացնում գործադիր իշխանության նկատմամբ, ընդունում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեն և իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ սահմանված այլ գործառույթներ:

4. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի լիազորությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ:

5. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը գործում է իր կանոնակարգին համապատասխան:»:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նիստերը հրապարակային են:

Այս առումով, հարկ ենք համարում անդրադառնալ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ օրենք) որոշ դրույթների, որոնցով կանոնակարգվում են հարցերի քվեարկությունների հետ կապված Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի գործունեության մանրամասները: Մասնավորապես, օրենքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հարցերի քվեարկություններն անցկացվում են բաց՝ անվանական:

Օրենքի 60-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ բաց քվեարկությունն անվանական է: Էլեկտրոնային համակարգը չգործելու դեպքում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և Կանոնակարգով նախատեսված անվանական քվեարկություններն անցկացվում են Կանոնակարգի 61-րդ հոդվածով սահմանված կարգով: Նույն հոդվածի 3-րդ

մասի համաձայն՝ գաղտնի, ինչպես նաև էլեկտրոնային համակարգը չգործելու դեպքում անվանական քվեարկության կազմակերպման, անցկացման և արդյունքների ամփոփման կարգը սահմանվում է Աշխատակարգով:

Բացի դրանից, օրենքի 165-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի, նրա հանձնաժողովների հրապարակային նիստերը, ինչպես նաև խորհրդարանական լսումներն առցանց հեռարձակվում են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:

Վերոգրյալ հոդվածների բովանդակային վերլուծությունից պարզ է դառնում, որ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ներկայացուցչական և օրենսդիր մարմին հանդես գալու սահմանադրաիրավական կարգավիճակն անխուսափելիորեն ենթադրում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նիստերի հրապարակայնության պահանջի ապահովման անհրաժեշտություն: Տվյալ պարագայում խնդրահարույց է, թե ինչպես է Հայաստանի Հանրապետության մարզերում ապահովվելու հերթական նստաշրջանի ընթացքում առնվազն մեկ արտագնա նիստ գումարելու պահանջը՝ հաշվի առնելով մարզերում քվեարկության համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների բացակայությունը:Դեռ հարց է, թե արդյո՞ք Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերն ապահովված են տեխնիկական միջոցներով հագեցած և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների սահմանված քանակի տեղակայման պահանջները բավարարող համապատասխան չափերի դահլիճներով, ինչը կերաշխավորի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նիստերի բնականոն գործընթացը:

2. Օրենքի 160-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի և նրա մարմինների լիազորությունների ու գործառույթների իրականացմանն ուղղված մասնագիտական սպասարկումը, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի քննարկմանը ներկայացվող նախագծերի կամ այլ փաստաթղթերի ձևակերպմանն ուղղված մասնագիտական աջակցությունը, ինչպես նաև նյութատեխնիկական ապահովումն իրականացնում է Աշխատակազմը, ուստի նախագծով նախատեսված կարգավորման պարագայում պարզ չէ նաև, թե ինչպես է Հայաստանի Հանրապետության մարզերում գործնականում ապահովվելու Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նիստերի թե մասնագիտական սպասարկումը և աջակցությունը, թե նյութատեխնիկական ապահովումը:

3. Հայաստանի Հանրապետության մարզերում արտագնա նիստ գումարելու պարագայում անհրաժեշտություն է առաջանալու կարգավորել պատգամավորների՝

Հայաստանի Հանրապետության մարզեր տեղափոխման նպատակով վերջիններիս տրանսպորտային միջոցներով ապահովման, առավել հեռու տեղակայված մարզերի դեպքում նաև՝ գիշերակացի և համանման այլ խնդիրներ, որոնք կապված են ֆինանսական ծախսերի հետ: Այդ առումով անհրաժեշտ է կատարել ֆինանսական հաշվարկներ՝ պարզելու համար, թե նախագծով նախատեսված կարգավորումներն ինչպիսի ֆինանսական բեռ են առաջացնելու Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի համար:

4. Նախագծով նախատեսված կարգավորման պարագայում առաջնահերթ կարևորություն են ներկայացնում Հայաստանի Հանրապետության մարզերում հիշյալ գործընթացի վերահսկողության իրականացման հետ կապված հարաբերությունները և այս առումով հարց է առաջանում, արդյո՞ք գործնականում հնարավոր է լինելու երաշխավորել պատգամավորների անվտանգությունը և վերջիններիս գործունեության անխոչընդոտ իրականացման ապահովումը:

5. Նախագծին կից ներկայացված հիմնավորման մեջ արտահայտված՝ տարածքների համաչափ զարգացման նպատակի իրագործմանը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մասնակցությունը չպետք է սահմանափակվի միայն այդ ուղղությամբ օրենքների ընդունմամբ, դիրքորոշման կապակցությամբ գտնում ենք, որ հիշյալ գործառույթն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, այդ թվում նաև՝ արտագնա նիստերի միջոցով, ելնելով իր՝ տարածքային կառավարման և զարգացման, ինչպես նաև մարզերի և համայնքների համաչափ զարգացմանն ուղղված նորարարական և ներդրումային ծրագրերի մշակման ոլորտներում քաղաքականության իրականացման իրավասությունից:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-080-01.04.2019-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-9-Ն սահմանադրական օրենքի 35-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 3-րդ մասով.

«3. Հերթական նստաշրջանի ընթացքում գումարվում է առնվազն մեկ արտագնա նիստ ՀՀ մարզերից մեկում: Արտագնա նիստի գումարման վայրը, ժամը, նիստի անցկացման կարգը եւ օրակարգը հաստատվում եւ հրապարակվում է արտագնա առաջիկա նիստից առնվազն տասը աշխատանքային օր առաջ:»

Հոդված 2. Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի՝

«նիստերի» բառից հետո լրացնել «ինչպես նաեւ արտագնա նիստերի օրակարգերի նախագծերը» բառերը:

Հոդված 3. Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝

«նիստերի» բառից հետո լրացնել «ինչպես նաեւ արտագնա նիստերի օրակարգերի նախագծերը» բառերը:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 մայիսի 2019 թվականի N 533 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ Արտակ Ասատրյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-080-01.04.2019-ՊԻ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ

2019 թ. մայիսի 14
Երևան

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ

- **Ներկա իրավիճակը եւ իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.**

Տարածքների համաչափ զարգացումն, ի թիվս այնի, ենթադրում է Երեւան քաղաքի եւ մարզերի, ինչպես նաեւ մարզերի միջեւ առկա կենսամակարդակների տարբերությունների նվազեցում եւ մարզերի զարգացման տեմպերի մոտեցում Երեւան քաղաքի զարգացման տեմպերին: Այս կարեւորագույն նպատակի իրագործմանը Ազգային ժողովի մասնակցությունը չպետք է սահմանակվի միայն այդ ուղղությամբ օրենքների ընդունմամբ եւ օրենսդրական դաշտի բարելավմամբ: Ազգային ժողովը տարբեր ակտիվ գործողություններով պետք է ցույց տա, որ ՀՀ մարզերի բնակչությունը եւ նրանց խնդիրները գտնվում են իրենց ուշադրության կենտրոնում: Ասվածով պայմանավորված՝ առաջարկվում է հերթական նստաշրջանի ընթացքում ՀՀ մարզերից մեկում գումարել առնվազն մեկ արտագնա նիստ՝ տվյալ մարզին նվիրված խնդիրների օրակարգով:

- **Առաջարկվող կարգավորումը**

Օրենքի նախագծով առաջարկվում է «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահամանադրական օրենքում ամրագրել ՀՀ մարզերում հերթական նստաշրջանի ընթացքում առնվազն մեկ արտագնա նիստ գումարելու պարտադիր պահանջ եւ դրանից բխող լրացումներ կատարել Ազգային ժողովի նախագահի եւ խորհրդի լիազորություններում:

- **Ակնկալվող արդյունքը**

Այս լրացումներն ընդունվելու դեպքում «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքում կսահմանվեն արտագնա նիստերի անցկացման պարտադիր պահանջ, որը կնպաստի ընտրողների առջեւ Ազգային ժողովի եւ պատգամավորների հաշվետվողականության բարձրացմանը, ինչպես նաեւ Ազգային ժողովին թույլ կտա առավել արդյունավետորեն իրականացնել իր վերահսկողական գործառույթը: